ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/15

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչներ՝

Պ. Գաբրելյանի (լիազորագիր՝ տրված 04.02.2022թ.),

Տ. Միրզոյանի (լիազորագիր՝ տրված 04.02.2022թ.),

Ս.Ստեփանյանի (լիազորագիր՝ տրված 04.02.2022թ.),

քննելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից 01.02.2022թ. ներկայացված (02.02.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/15 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ջիարջի» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 01.02.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«1. Վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ հայտարարել է էԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին հայտ է ներկայացրել նաև «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն:

24.11.2021թ-ին էլեկտրոնային փոստով ստանում ենք «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերնագրով գրություն, որում նշված չեն եղել որևէ անհամապատասխանության մասին և մասնակցին չի տեղեկացվել թե ինչ շտկումներ է պահանջում պատվիրատուն /կից ներկայացնում ենք/:

02.12.2021թ-ին «Չափաբաժնի մերժում» ծանուցումով տեղեկանում ենք, որ մեր հայտը ներկայացված բոլոր չափաբաժինների մասով մերժվել են:

Սույն փաստով «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն դիմել էր ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձին՝ ներկայացնելով բողոք:

13.01.2022թ-ի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի կողմից թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/92 բողոքի որոշումով բողոքը բավարարվել է մասնակի՝ «Պարտավորեցնել «էԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 02.12.2021թ նիստի թիվ 3 արձանագրությունը»

24.01.2022թ-ին պատվիրատուն հրապարակում է թիվ 5 արձանագրությունը և նույն օրը շտկման պահանջ է ուղարկում «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ին: Կից թիվ 5 արձանագրությունը:

Սահմանված ժամկետում «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվում է շտկված հավելված 1.1-ը, սակայն 27.01.2022թ-ի թիվ 6 արձանագրությունով պատվիրատուն մերժում է թիվ 2, 6, 7, 13, 15, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40 և 44 չափաբաժինները՝ հիմնավորելով, որ ներկայացված նույն չափաբաժնի մեջ նշված են ինչպես ՀՀ գրանցված դեղերի պետական գրանցամատյանում ներառված, այնպես էլ չներառված արտադրողներ:

Կից ներկայացվում է մեր կողմից ներկայացված շտկված հավելված 1.1-ը և թիվ 6 արձանագրությունը:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի կողմից «էլեկտրոնային եղանակով և փակ նպատակային մրցույթի ձևով իրականացվող գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին նախարարի» 03.04.2019թ. N 371-Ա հրամանով սահմանված է, որ

Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայացվել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ ունեցող ապրանքներ, ապա դրանցից բավարար գնահատվածները ներառվում են սույն հավելվածում:

Հետևաբար պատվիրատուն պետք է մեկից ավել արտադրողների կողմից արտադրված ապրանքներ ներկայացրած մասնակցին ընտրված ճանաչի և պայմանագրում ներառի միայն այն ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշը և արտադրողը, որոնք բավարարում ենք հրավերով ներկայացված պահանջներին, այլ ոչ թե մերժի ամբողջ չափաբաժինը:

Մեր կողմից ներկայացված բոլոր չափաբաժիններում առկա են ՀՀ գրանցված դեղերի պետական գրանցամատյանում ներառված ապրանքային նշաններ և արտադրողներ, ինչպես պահանջված է հրավերով, ուստի պատվիրատուն իրավունք չուներ մերժելու չափաբաժինները»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել պատվիրատուին չեղարկելու 27.01.2021թ. թիվ 6 արձանագրությունը՝ 2-րդ, 6-րդ, 7-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ, 25-րդ, 29-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 40-րդ և 44-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.02.2022թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 04.02.2022թ. թիվ 09/107 գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ուսումնասիրելով «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի բողոքով ներկայացված տեղեկատվությունը հայտնում ենք, որ ընկերության կողմից ներկայացված հայտը մերժվել է հիմք ընդունելով հետևյալը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգին թիվ 2, 5, 6, 7, 8, 13, 14, 15, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40, 44, 47 չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն:

2. «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի թիվ 2, 5, 6, 7, 8, 13, 14, 15, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40, 44, 47 չափաբաժինների տեխնիկական բնութագրերով սահմանվել է նաև, որ. «Դեղը ներառված է ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր)» պայմանը: Նշված պայմանի հիմք է հանդիսացել ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին ՀՀ կառավարության 02.05.2013թ.-ի թիվ 502-Ն որոշման պահանջները:

3. Հրավերով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է նաև իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): Ընդ որում, մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, տարբեր ապրանքային նշան ունեցող ապրանքներ:

4. «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի հայտը ի սկզբանե չի ներառել ապրանքների համար առաջարկվող ապրանքային նշանին համապատասխանող արտադրողի անվանումը: Մասնակցի կողմից հայտով ներկայացվել են միայն ապրանքի արտադրող երկրների անվանումները՝ ինչը հրավերով չի պահանջվել:

5. Թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/92 բողոքի պահանջ են հանդիսացել՝

ա/ պարտավորեցնել պատվիրատուին չեղարկել 02.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը,

բ/ պարտավորեցնել Պատվիրատուին այն բոլոր չափաբաժինների մասով, որոնց համար «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նվազագույն գնային առաջարկ և որտեղ առկա է «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված և ՀՀ-ում գրացնված դեղերի պետական գրանցամատյանում ներառված դեղ, ընդունել որպես հրավերի պահանջներին համապատասխան:

Սույն թվականի հունվարի 13-ին բողոք քննող անձը թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/92 որոշմամբ սույն բողոքը բավարարվել է միայն (ա) կետի մասով, իսկ «պարտավորեցնել Պատվիրատուին այն բոլոր չափաբաժինների մասով, որոնց համար «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նվազագույն գնային առաջարկ և որտեղ առկա է «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված և ՀՀ-ում գրացնված դեղերի պետական գրանցամատյանում ներառված դեղ, ընդունել որպես հրավերի պահանջներին համապատասխան» պահանջը մերժվել է:

6. Սույն ընթացակարգը «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվել է, և գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 13.01.2022թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/92 որոշումը, դադարեցրել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 02.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, որի վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է գնումների պաշտոնական տեղեկագրում:

7. Գնահատող հանձնաժողովի 2022թ.-ի հունվարի 24-ի նիստի արձանագրության 3.1 կետով հստակ նկարագրվել են հրավերի պահանջների նկատմամբ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի հայտում առկա անհահամապատասխանությունները, մասնավորապես. «Հայտով ներկայացված թիվ 2, 5, 6, 7, 8, 13, 14, 15, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40, 44, 47 չափաբաժինների մասով անհրաժեշտ է շտկել ապրանքային նշանները, ապրանքների արտադրողների անվանումները՝ նշելով ոչ թե երկրի, այլ յուրաքանչյուր չափաբաժնի համար հստակ արտադրող կազմակերպության անվանումը և դրան համապատասխանող ապրանքային նշանը:»: Նույն նիստի արձանագրության 4-րդ կետով որոշվել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրը այդ մասին տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Կից ներկայացվում է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2022թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության պատճենը:

8. «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է առկա անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը, սակայն շտկված փաստաթղթով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես..

● թիվ 2 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ամիոդարոն» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Բորիսովյան բուժ պատրաստուկների գործարան» և «Էլարա» արտադրողների անվանումներ: «Էլարա» արտադրողի կողմից արտադրված «Ամիոդարոն» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 6 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Անէսթերան», «Իզոտրոյ» և «Իզոֆլուրան» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «Էս. Մի. Ռոմֆարմ Քոմպանի», «Տրոյկա Ֆարմասյուտիկալս» և «Պիրամալ էնթերփրայզիս» արտադրողների անվանումներ: «Պիրամալ էնթերփրայզիս» արտադրողի կողմից արտադրված «Իզոֆլուրան 100մլ» (Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառված է «Պիրամալ էնթերփրայզիս» արտադրողի կողմից արտադրված «Իզոֆլյուրան 250մլ»-ը, որը մասնակցի հայտում ներառված չէ) ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 7 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Օմեպրազոլ» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Պրոիզվոդստվո մեդիկամենտով», «Բորիսովյան պատրաստուկների գործարան» և «Մեդիկամեն» արտադրողների անվանումներ: «Պրոիզվոդստվո մեդիկամենտով» արտադրողի կողմից արտադրված «Օմեպրազոլ» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 13 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Զոնդան» և Օնդանսետրոն» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «Ինցեպտա» և «Գրոտեքս» արտադրողների անվանումներ: «Գրոտեքս» արտադրողի կողմից արտադրված «Օնդանսետրոն» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 15 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Նեոսմեկտին» և «Դիոսմեկտիտ» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «Ֆարմստանդարտ» և «Ֆարմակոր» արտադրողների անվանումներ: «Ֆարմակոր» արտադրողի կողմից արտադրված «Դիոսմեկտիտ» ապրանքային նշանով դեղամիջոցը

ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 16 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Դեքսամեթազոն» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Աստերիա» և «Պոլֆա» արտադրողների անվանումներ: «Աստերիա» արտադրողի կողմից արտադրված «Դեքսամեթազոն» (ակնակաթիլներ 0,1% 5մլ) ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 25 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ատորվաստատին» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Ռեպլեկ», «Բորիսովսկի», «Իրբիդ» և «Պրանա» արտադրողների անվանումներ: «Բորիսովսկի», «Իրբիդ» և «Պրանա» արտադրողների կողմից արտադրված «Ատորվաստատին» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 29 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Դիտիլին», «Դիտիլին» և «Սուքսամեթոնիում» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «Բելմեդպրեպարատի», «Ֆարմստանդարտ Բիոլեկ» և «Կուրսկ» արտադրողների անվանումներ: «Կուրսկ» արտադրողի կողմից արտադրված «Սուքսամեթոնիում» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 33 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ադրենալին» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Զդորովե», «Գրոտեքս», «Արմավիրսկայա Բիոֆաբրիկա» և «Մոսկոսկայա Էնդոկրիննայա» արտադրողների անվանումներ: «Գրոտեքս», «Արմավիրսկայա Բիոֆաբրիկա» և «Մոսկոսկայա Էնդոկրիննայա» արտադրողների կողմից արտադրված «Ադրենալին» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 34 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ֆամոտիդին» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Բորիսովյան պատրաստուկների գործարան» և «Օզոն» արտադրողների անվանումներ: «Օզոն» արտադրողի կողմից արտադրված «Ֆամոտիդին» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ

Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 35 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Օմնիպակ» և «Կոնտրապակ» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «ՋԻ Հելթքեյր» և «Յունիք Ֆարմասյութիքալ» արտադրողների անվանումներ: «Յունիք Ֆարմասյութիքալ» արտադրողի կողմից արտադրված «Կոնտրապակ» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 36 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Օմնիպակ» և «Կոնտրապակ» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «ՋԻ Հելթքեյր» և «Յունիք Ֆարմասյութիքալ» արտադրողների անվանումներ: «Յունիք Ֆարմասյութիքալ» արտադրողի կողմից արտադրված «Կոնտրապակ» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 40 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Կլարիթրոմիցին» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Բորիսովյան բուժ պատրաստուկների գործարան», «Օզոն», «Ռաֆարմա» և «ԴԽՖ» արտադրողների անվանումներ: «Օզոն», «Ռաֆարմա» և «ԴԽՖ» արտադրողների կողմից արտադրված «Կլարիթրոմիցին» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 44 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Պրոզերին» և «Նեոստիգմին» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «Դարինցա» և «Նովոսիբիրսկ» արտադրողների անվանումներ: «Նովոսիբիրսկ» արտադրողի կողմից արտադրված «Նեոստիգմին» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի (զ) պարբերության համաձայն՝ «հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը,

ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)»:

Նույն կարգի 50-րդ կետի համաձայն՝ «ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է և ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի»:

«ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի «Հայտը ներկայացնելու կարգը» բաժնի 4.3 կետի համաձայն՝ «մասնակիցը հայտով ներկայացնում է նաև իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)՝ համակարգի միջոցով: Ընդ որում, մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, տարբեր ապրանքային նշան ունեցող ապրանքներ»:

9. Գնումների գործընթացի կազմակերպման կարգի վերոնշյալ նորմերից և հրավերով սահմանված պահանջից հետևում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից ապրանքի տեխնիկական բնութագիրը և հրավերով նախատեսված ապրանքային նշանները, ինչպես նաև արտադրողի անվանումները պետք է գնահատվեն որպես ապրանքի ամբողջական նկարագիր:

10. Հաշվի առնելով այն, որ բողոքարկվող ընթացակարգի հրավերը, որն ինքնաշխատ ձևավորվել է համակարգի կողմից, չի պարունակել բողոքով նշված «...Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայացվել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ ունեցող ապրանքներ, ապա դրանցից բավարար գնահատվածները ներառվում են սույն հավելվածում...» պայմանը, ուստի տվյալ ընթացակարգի շրջանակներում այն կիրառելի չէ, քանի որ այն կհակասեր՝

- կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի (զ) պարբերության պահանջներին, այն է՝ «հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)»:

● նույն կարգի 50-րդ կետի պահանջներին, այն է՝ «ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է և ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի»:

● «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածին, այն է՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով և բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում:

11. Բացի այդ, մասնակցիների կողմից հայտով մեկ ապրանքի համար մեկից ավելի ապրանքային նշան ներկայացնելու վերաբերյալ որոշակի պարզաբանումներ ստանալու նպատակով Համալսարանը գրավոր դիմել էր գնումների ոլորտը կարգավորող լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, որը պատասխան գրությամբ հայտնել է՝ եթե հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի նաև իր կողմից առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ապա դրանք կարող են լինել մեկից ավելին (որոնք ներառվելու են կնքվելիք պայմանագրի նախագծում), եթե մասնակցի կողմից առաջարկվող՝ տարբեր երկրներում տարբեր արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշանների ունեցող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Կից ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարության պատասխան գրության պատճենը:

«ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված իրավական հիմքերի և ապացույցների վերաբերյալ:

Մասնակցի կողմից ներկայացված բողոքի 2-րդ մասում նշված ՀՀ ֆինանսների նախարարի 03.06.2019թ.-ի թիվ 371-Ա հրամանը ուժը կորցրած է ճանաչել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 04.11.2019թ.-ի «Գնման ընթացակարգերի կազմակերպման ընթացքում օգտագործվող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 597-Ա հրամանի 2-րդ կետով:

Միաժամանակ հայտնում ենք, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով և բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում, իսկ բողոքաբերի կողմից վկայակոչված պայմանն ի սկզբանե ներառված չի եղել տվյալ ընթացակարգի հրավերում:

Հաշվի առնելով վերոգրյալը և Համալսարանի կողմից ներկայացրած փաստական տվյալները խնդրում եմ Ձեզ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի բողոքը մերժել»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.02.2022թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են ներկայացված դիրքորոշումը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2022/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2022/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ջիարջի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի շրջանակներում «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից 13.12.2021թ. ներկայացվել է բողոք, որով Ընկերությունը վիճարկել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ պատշաճ ծանուցելու, այն է՝ ծանուցմամբ արձանագրված և շտկման ենթակա անհամապատասխանությունները մանրամասն նկարագրելու փաստը:

3. Ընկերության կողմից ներկայացված վերը նշված բողոքը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 13.01.2022թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/92 որոշմամբ բավարարվել է մասնակի, մասնավորապես՝ որոշում է կայացվել «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-

ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին 02.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը դադարեցնելուն պարտավորեցնելու վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 13.01.2022թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/92 որոշումը, որոշում է կայացրել «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 02.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը դադարեցնելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարագի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված N 2, 5, 6, 7, 8, 13, 14, 15, 16, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40, 44, 47-րդ չափաբաժինների մասով անհրաժեշտ է շտկել ապրանքային նշանները, ապրանքների արտադրողների անվանումները՝ նշելով ոչ թե երկրի, այլ յուրաքանչյուր չափաբաժնի համար հստակ արտադրող կազմակերպության անվանում և դրան համապատասխանող ապրանքային նշանը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 24.01.2022թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ՝ մանրամասն նկարագրելով շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունները:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.01.2022թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը, սակայն շտկված փաստաթղթով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը թիվ 2, 6, 7, 13, 15, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40 և 44 չափաբաժինների մասով չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

● թիվ 2 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ամիոդարոն» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Բորիսովյան բուժ պատրաստուկների

գործարան» և «Էլարա» արտադրողների անվանումներ: «Էլարա» արտադրողի կողմից արտադրված «Ամիոդարոն» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 6 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Անէսթերան», «Իզոտրոյ» և «Իզոֆլուրան» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «Էս. Մի. Ռոմֆարմ Քոմպանի», «Տրոյկա Ֆարմասյուտիկալս» և «Պիրամալ էնթերփրայզիս» արտադրողների անվանումներ: «Պիրամալ էնթերփրայզիս» արտադրողի կողմից արտադրված «Իզոֆլուրան 100մլ» (Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառված է «Պիրամալ էնթերփրայզիս» արտադրողի կողմից արտադրված «Իզոֆլյուրան 250մլ»-ը, որը մասնակցի հայտում ներառված չէ) ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 7 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Օմեպրազոլ» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Պրոիզվոդստվո մեդիկամենտով», «Բորիսովյան պատրաստուկների գործարան» և «Մեդիկամեն» արտադրողների անվանումներ: «Պրոիզվոդստվո մեդիկամենտով» արտադրողի կողմից արտադրված «Օմեպրազոլ» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 13 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Զոնդան» և Օնդանսետրոն» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «Ինցեպտա» և «Գրոտեքս» արտադրողների անվանումներ: «Գրոտեքս» արտադրողի կողմից արտադրված «Օնդանսետրոն» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 15 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Նեոսմեկտին» և «Դիոսմեկտիտ» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «Ֆարմստանդարտ» և «Ֆարմակոր» արտադրողների անվանումներ: «Ֆարմակոր» արտադրողի կողմից արտադրված «Դիոսմեկտիտ» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 16 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Դեքսամեթազոն» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Աստերիա» և «Պոլֆա» արտադրողների անվանումներ: «Աստերիա» արտադրողի կողմից արտադրված «Դեքսամեթազոն» (ակնակաթիլներ 0,1% 5մլ) ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 25 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ատորվաստատին» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Ռեպլեկ», «Բորիսովսկի», «Իրբիդ» և «Պրանա» արտադրողների անվանումներ: «Բորիսովսկի», «Իրբիդ» և «Պրանա» արտադրողների կողմից արտադրված «Ատորվաստատին» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 29 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Դիտիլին», «Դիտիլին» և «Սուքսամեթոնիում» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «Բելմեդպրեպարատի», «Ֆարմստանդարտ Բիոլեկ» և «Կուրսկ» արտադրողների անվանումներ: «Կուրսկ» արտադրողի կողմից արտադրված «Սուքսամեթոնիում» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 33 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ադրենալին» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Զդորովե», «Գրոտեքս», «Արմավիրսկայա Բիոֆաբրիկա» և «Մոսկոսկայա Էնդոկրիննայա» արտադրողների անվանումներ: «Գրոտեքս», «Արմավիրսկայա Բիոֆաբրիկա» և «Մոսկոսկայա Էնդոկրիննայա» արտադրողների կողմից արտադրված «Ադրենալին» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 34 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ֆամոտիդին» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Բորիսովյան պատրաստուկների գործարան» և «Օզոն» արտադրողների անվանումներ: «Օզոն» արտադրողի կողմից արտադրված «Ֆամոտիդին» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 35 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Օմնիպակ» և «Կոնտրապակ» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «ՋԻ Հելթքեյր» և «Յունիք Ֆարմասյութիքալ» արտադրողների անվանումներ: «Յունիք Ֆարմասյութիքալ» արտադրողի կողմից արտադրված «Կոնտրապակ» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 36 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Օմնիպակ» և «Կոնտրապակ» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «ՋԻ Հելթքեյր» և «Յունիք Ֆարմասյութիքալ» արտադրողների անվանումներ: «Յունիք Ֆարմասյութիքալ» արտադրողի կողմից արտադրված «Կոնտրապակ» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 40 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Կլարիթրոմիցին» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Բորիսովյան բուժ պատրաստուկների գործարան», «Օզոն», «Ռաֆարմա» և «ԴԽՖ» արտադրողների անվանումներ: «Օզոն», «Ռաֆարմա» և «ԴԽՖ» արտադրողների կողմից արտադրված «Կլարիթրոմիցին» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 44 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Պրոզերին» և «Նեոստիգմին» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «Դարինցա» և «Նովոսիբիրսկ» արտադրողների անվանումներ: «Նովոսիբիրսկ» արտադրողի կողմից արտադրված «Նեոստիգմին» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

9. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարագի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերության կողմից ներկայացված հայտը թիվ 2, 6, 7, 13, 15, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40 և 44 չափաբաժինների մասով անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

10. «Ջիարջի» ՍՊԸ-ն ներկայացված բողոքի 2-րդ կետով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարի կողմից «էլեկտրոնային եղանակով և փակ նպատակային մրցույթի ձևով իրականացվող գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Ֆինանսների

նախարարի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին նախարարի» 03.04.2019թ. N 371-Ա հրամանով սահմանված է, որ

Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայացվել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ ունեցող ապրանքներ, ապա դրանցից բավարար գնահատվածները ներառվում են սույն հավելվածում:

Հետևաբար պատվիրատուն պետք է մեկից ավել արտադրողների կողմից արտադրված ապրանքներ ներկայացրած մասնակցին ընտրված ճանաչի և պայմանագրում ներառի միայն այն ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշը և արտադրողը, որոնք բավարարում ենք հրավերով ներկայացված պահանջներին, այլ ոչ թե մերժի ամբողջ չափաբաժինը»:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ջիարջի» ՍՊԸ-ի 01.02.2022թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 04.02.2022թ. թիվ 09/107 գրությամբ հայտնած դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

<u>Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային

թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

<u>Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում,</u> ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Այսպես՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ջիարջի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի շրջանակներում «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից 13.12.2021թ. ներկայացվել է բողոք, որով Ընկերությունը վիճարկել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ պատշաճ ծանուցելու, այն է՝ ծանուցմամբ արձանագրված և շտկման ենթակա անհամապատասխանությունները մանրամասն նկարագրելու փաստը:

Ընկերության կողմից ներկայացված վերը նշված բողոքը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 13.01.2022թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/92 որոշմամբ բավարարվել է մասնակի, մասնավորապես՝ որոշում է կայացվել «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին 02.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը դադարեցնելուն պարտավորեցնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք

ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 13.01.2022թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/92 որոշումը, որոշում է կայացրել «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 02.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը դադարեցնելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարագի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված N 2, 5, 6, 7, 8, 13, 14, 15, 16, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40, 44, 47-րդ չափաբաժինների մասով անհրաժեշտ է շտկել ապրանքային նշանները, ապրանքների արտադրողների անվանումները՝ նշելով ոչ թե երկրի, այլ յուրաքանչյուր չափաբաժնի համար հստակ արտադրող կազմակերպության անվանում և դրան համապատասխանող ապրանքային նշանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 24.01.2022թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ՝ մանրամասն նկարագրելով շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.01.2022թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը, սակայն շտկված փաստաթղթով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը թիվ 2, 6, 7, 13, 15, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40 և 44 չափաբաժինների մասով չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

● թիվ 2 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ամիոդարոն» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Բորիսովյան բուժ պատրաստուկների գործարան» և «Էլարա» արտադրողների անվանումներ: «Էլարա» արտադրողի կողմից արտադրված «Ամիոդարոն» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 6 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Անէսթերան», «Իզոտրոյ» և «Իզոֆլուրան» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «Էս. Մի. Ռոմֆարմ Քոմպանի», «Տրոյկա Ֆարմասյուտիկալս» և «Պիրամալ էնթերփրայզիս» արտադրողների անվանումներ: «Պիրամալ էնթերփրայզիս» արտադրողի կողմից արտադրված «Իզոֆլուրան 100մլ» (Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառված է «Պիրամալ էնթերփրայզիս» արտադրողի կողմից արտադրված «Իզոֆլյուրան 250մլ»-ը, որը մասնակցի հայտում ներառված չէ) ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 7 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Օմեպրազոլ» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Պրոիզվոդստվո մեդիկամենտով», «Բորիսովյան պատրաստուկների գործարան» և «Մեդիկամեն» արտադրողների անվանումներ: «Պրոիզվոդստվո մեդիկամենտով» արտադրողի կողմից արտադրված «Օմեպրազոլ» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 13 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Զոնդան» և Օնդանսետրոն» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «Ինցեպտա» և «Գրոտեքս» արտադրողների անվանումներ: «Գրոտեքս» արտադրողի կողմից արտադրված «Օնդանսետրոն» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 15 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Նեոսմեկտին» և «Դիոսմեկտիտ» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «Ֆարմստանդարտ» և «Ֆարմակոր» արտադրողների անվանումներ: «Ֆարմակոր» արտադրողի կողմից արտադրված «Դիոսմեկտիտ» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 16 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Դեքսամեթազոն» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Աստերիա» և «Պոլֆա» արտադրողների անվանումներ: «Աստերիա» արտադրողի կողմից արտադրված «Դեքսամեթազոն» (ակնակաթիլներ 0,1% 5մլ) ապրանքային նշանով դեղամիջոցը

ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 25 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ատորվաստատին» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Ռեպլեկ», «Բորիսովսկի», «Իրբիդ» և «Պրանա» արտադրողների անվանումներ: «Բորիսովսկի», «Իրբիդ» և «Պրանա» արտադրողների կողմից արտադրված «Ատորվաստատին» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 29 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Դիտիլին», «Դիտիլին» և «Սուքսամեթոնիում» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «Բելմեդպրեպարատի», «Ֆարմստանդարտ Բիոլեկ» և «Կուրսկ» արտադրողների անվանումներ: «Կուրսկ» արտադրողի կողմից արտադրված «Սուքսամեթոնիում» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 33 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ադրենալին» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Զդորովե», «Գրոտեքս», «Արմավիրսկայա Բիոֆաբրիկա» և «Մոսկոսկայա Էնդոկրիննայա» արտադրողների անվանումներ: «Գրոտեքս», «Արմավիրսկայա Բիոֆաբրիկա» և «Մոսկոսկայա Էնդոկրիննայա» արտադրողների կողմից արտադրված «Ադրենալին» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 34 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ֆամոտիդին» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Բորիսովյան պատրաստուկների գործարան» և «Օզոն» արտադրողների անվանումներ: «Օզոն» արտադրողի կողմից արտադրված «Ֆամոտիդին» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 35 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Օմնիպակ» և «Կոնտրապակ» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «ՋԻ Հելթքեյր» և «Յունիք Ֆարմասյութիքալ» արտադրողների անվանումներ: «Յունիք Ֆարմասյութիքալ» արտադրողի կողմից արտադրված «Կոնտրապակ» ապրանքային նշանով դեղամիջոցը

ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 36 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Օմնիպակ» և «Կոնտրապակ» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «ՋԻ Հելթքեյր» և «Յունիք Ֆարմասյութիքալ» արտադրողների անվանումներ: «Յունիք Ֆարմասյութիքալ» արտադրողի կողմից արտադրված «Կոնտրապակ» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 40 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Կլարիթրոմիցին» ապրանքային նշան և դրան համապատասխանող «Բորիսովյան բուժ պատրաստուկների գործարան», «Օզոն», «Ռաֆարմա» և «ԴԽՖ» արտադրողների անվանումներ: «Օզոն», «Ռաֆարմա» և «ԴԽՖ» արտադրողների կողմից արտադրված «Կլարիթրոմիցին» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

● թիվ 44 չափաբաժնի մասով «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Պրոզերին» և «Նեոստիգմին» ապրանքային նշաններ և դրանց համապատասխանող «Դարինցա» և «Նովոսիբիրսկ» արտադրողների անվանումներ: «Նովոսիբիրսկ» արտադրողի կողմից արտադրված «Նեոստիգմին» ապրանքային նշանով դեղամիջոցը ներառված չէ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարագի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերության կողմից ներկայացված հայտը թիվ 2, 6, 7, 13, 15, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40 և 44 չափաբաժինների մասով անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

«Ջիարջի» ՍՊԸ-ն ներկայացված բողոքի 2-րդ կետով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարի կողմից «էլեկտրոնային եղանակով և փակ նպատակային մրցույթի ձևով իրականացվող գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին նախարարի» 03.04.2019թ. N 371-Ա հրամանով սահմանված է, որ

Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայացվել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և

մակնիշ ունեցող ապրանքներ, ապա դրանցից բավարար գնահատվածները ներառվում են սույն հավելվածում:

Հետևաբար պատվիրատուն պետք է մեկից ավել արտադրողների կողմից արտադրված ապրանքներ ներկայացրած մասնակցին ընտրված ճանաչի և պայմանագրում ներառի միայն այն ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշը և արտադրողը, որոնք բավարարում ենք հրավերով ներկայացված պահանջներին, այլ ոչ թե մերժի ամբողջ չափաբաժինը»:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, մինչդեռ՝ սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ թեև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 13.01.2022թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/92 որոշման հիման վրա «Ջիարջի» ՍՊԸ-ին ևս մեկ անգամ տրվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն՝ այս անգամ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված իմպերատիվ պահանջների պահպանմամբ, այնուամենայնիվ, Ընկերության կողմից ներկայացված շտկված փաստաթղթով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը թիվ 2, 6, 7, 13, 15, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40 և 44 չափաբաժինների մասով չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին:***

Ընկերությունը ներկայացված բողոքով, որպես բողոքի իրավական հիմք վկայակոչել է ՀՀ ֆինանսների նախարարի «Էլեկտրոնային եղանակով և փակ նպատակային մրցույթի ձևով իրականացվող գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու և ՀՀ ֆինանսների նախարարի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» 03.06.2019թ. N 371-Ա հրամանը և հայտնել, որ պատվիրատուն պետք է

մեկից ավել արտադրողների կողմից արտադրված ապրանքներ ներկայացրած մասնակցին ընտրված ճանաչեր և պայմանագրում ներառի միայն այն ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշը և արտադրողը, որոնք բավարարում են հրավերով ներկայացված պահանջներին, այլ ոչ թե մերժեր ամբողջ չափաբաժինը:

Այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ ՀՀ ֆինանսների նախարարի նշված հրամանով հաստատվել են բաց մրցույթի ձևով կազմակերպվող գնման գործընթացում օգտագործվող, գնանշման հարցման ձևով՝ գնումների բազային միավորի տասնապատիկը գերազանցող, գնման գործընթացում օգտագործվող, գնանշման հարցման ձևով իրականացվող՝ գնումների բազային միավորի տասնապատիկը չգերազանցող, գնման գործընթացում օգտագործվող, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա մեկ անձից գնման ձևով իրականացվող՝ գնումների բազային միավորի տասնապատիկը գերազանցող, գնման գործընթացում օգտագործվող, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա մեկ անձից գնման ձևով իրականացվող՝ գնումների բազային միավորրի տասնապատիկը չգերազանցող, գնման գործընթացում օգտագործվող, փակ նպատակային մրցույթի ձևով իրականացվող՝ գնումների բազային միավորի տասնապատիկը չգերազանցող, գնման գործընթացում օգտագործվող և փակ նպատակային մրցույթի ձևով իրականացվող՝ գնումների բազային միավորի տասնապատիկը գերազանցող, գնման գործընթացում օգտագործվող հրավերների օրինակելի ձևերը, ***մինչդեռ՝ քննարկվող Ընթացակարգը էլեկտրոնային աճուրդ է և ինչպես արդեն պարզ դարձավ տվյալ հրամանով էլեկտրոնային աճուրդի հրավերի օրինակելի ձև չի հաստատվել, իսկ ինչ վերաբերում է պատվիրատուն պետք է պայմանագրում ներառեր միայն այն ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշը և արտադրողը, որոնք բավարարում էին հրավերով ներկայացված պահանջներին, այլ ոչ թե մերժեր ամբողջ չափաբաժինը, ապա նման կարգավորում Ընթացակարգի հրավերով նախատեսված չէ:***

Միևույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ ***ՀՀ ֆինանսների նախարարի «էլեկտրոնային եղանակով և փակ նպատակային մրցույթի ձևով իրականացվող գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու և ՀՀ ֆինանսների նախարարի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» 03.06.2019թ. N 371-Ա հրամանը ՀՀ ֆինանսների նախարարի 04.11.2019թ. N 597-Ա հրամանի 2-րդ կետի համաձայն՝ ուժը կորցրած է ճանաչվել:***

Այսպիսով՝ սույն բողոքի քննության արդյունքում արձանագրված փաստական հանգամանքների և կիրառման ենթակա իրավական նորմերի համատեքստում, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված իմպերատիվ դրույթների պահպանմամբ, ուստի՝ ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից 01.02.2022թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**